ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԳՐԱՎԱԾ ՓՈՐՁԱԳԵՏ ԱՐՏԱՇԵՍ ԹԱՌԼԱՄԱՋՅԱՆԻ ԱՊՐԻԼ-ՀՈԿՏԵՄԲԵՐ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՀԱՄԱՐ

Ի կատարումն 2019 թվականի հոկտեմբերի 11-ին կնքված աշխատանքային պայմանագրի (փորձագետ ընդգրկելու վերաբերյալ) 2.1.6-րդ կետի ներկայացնում եմ իմ կողմից կատարված աշխատանքների կիսամյակային (վեց ամսվա) հաշվետվությունը:

Հաշվետու ժամանակահատվածում իմ կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. Պետական գույքի կառավարման հայեցակարգից (ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 1834-Լ որոշում) բխող և ՀՀ կառավարության 2019-2023թթ. գործունեության միջոցառումների ծրագրին համապատասխան մասնակցել եմ ՀՀ կառավարության կողմից ընդունված ՀՀ կառավարության 2020թ-ի հուլիսի 23-ի N 1236-Ն, ՀՀ կառավարության 2020թ-ի հունիսի 25-ի N 1079-Ն, ՀՀ կառավարության 2020թ-ի հուլիսի 18-ի N 1037-Ն և ՀՀ կառավարության 2020թ-ի հունիսի 4-ի N 914-Ն որոշումների մշակման աշխատանքներին:

2. Մասնակցել եմ օրենսդրությամբ սահմանված կարգի համաձայն շրջանառության մեջ դրված «Պետական սեփականություն հանդիսացող և պետական ոչ առևտրային կազմակերպությունների սեփականությունը հանդիսացող գույքի օտարման (վաճառքի), օտարման (վաճառքի) մրցույթի և աճուրդի կազմակերպման ու անցկացման կարգերը՝ սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի N 882-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին», «Պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի օգտագործման վիճակի մշտադիտարկումներ (մոնիթորինգ) անցկացնելու և գույքի օգտագործման բարելավման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու կարգը հաստատելու մասին»,

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 13-ի N 1130-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծերի և «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակմանը:

3. Մասնակցել եմ ՀՀ կառավարության 2019 թվականի հունիսի 17-ի N 949-Ն որոշման համաձայն ստեղծված հանձնաժողովի աշխատանքներին, կազմել եմ և՛ հանձնաժողովի նիստերի արձանագրությունները, և՛ այդ արձանագրություններից բխող եզրակացությունների նախագծերը ու ներկայացրել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

4. Մասնակցել եմ իմ կողմից ներկայացված մեթոդական առաջարկությունների հիման վրա և պետական գույքի կառավարման նոր 2021-2023թթ ընկած ժամանակահատվածի ծրագրի կազմման աշխատանքներին, որը սահմանված կարգով դրվել է շրջանառության մեջ և ներկայացվելու է ՀՀ կառավարության աշխատակազմի քննարկմանը:

5. Մասնակցել եմ պետական գույքի 2017-2020թթ. մասնավորեցման ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերի մշակմանը, որոնք քննարկվում են ՀՀ ԱԺ-ում:

6. Մասնակցել եմ պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կիսամյակային ֆինանսատնտեսական ամփոփ վերլուծությունների իրականացմանը և ներկայացրել համապատասխան առաջարկություններ:

7. Մասնակցել եմ պետական գույքի կառավարման կոմիտեի կողմից ներկայացված եռամսյակային և կիսամյակային գործունեությունը ներկայացնող հաշվետվությունների կազմման աշխատանքներին:

8. Փորձագիտական առաջարկություններ և եզրակացություններ եմ ներկայացրել մի շարք ՀՀ օրենքների նախագծերի և այլ իրավական ակտերի ու մշակված ռազմավարական նախագծերի վերաբերյալ:

9. Կատարել եմ պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի և նախագահի տեղակալների կողմից պետական գույքի կառավարման կանոնակարգմանն առնչվող հանձնարարականները, ինչպես նաև մասնակցել եմ պետական գույքի կառավարման ծրագրերի և իրավական ակտերի մշակման վարչության գործառույթներին վերաբերվող այլ աշխատանքների կատարմանը:

ՓՈՐՁԱԳԵՏ՝ **ԱՐՏԱՇԵՍ ԹԱՌԼԱՄԱՋՅԱՆ**

14.10.2020թ.